Պահատուփերի վարձակալության պայմաններ

Վարձակալության ժամկետ	**Փոքր (սմ)**	**Միջին (սմ)**	**Մեծ (սմ)**
	4.9x30x40	11.8x30x40	15.2x30x40
30 օր	15,000 ՀՀ դրամ	25,000 ՀՀ դրամ	30,000 ՀՀ դրամ
90 օր	25,000 ՀՀ դրամ	35,000 ՀՀ դրամ	40,000 ՀՀ դրամ
180 օր	35,000 ՀՀ դրամ	45,000 ՀՀ դրամ	50,000 ՀՀ դրամ
365 օր	55,000 ՀՀ դրամ	65,000 ՀՀ դրամ	70,000 ՀՀ դրամ

Այլ այմաններ.

1. Բանկի պահատուփերի ծառայությունից կարող են օգտվել 18 տարեկանը լրացած ֆիզիկական անձիք, ովքեր նաև հանդիսանում են Բանկում հաշվետեր:
2. Բանկը պահատուփային ծառայություն է մատուցում Բանկի «Թումանյան» մասնաճյուղում, որը գտնվում է՝ ք. Երևան, Թումանյան փողոց, 24 շենք, 48 տարածք հասցեում:
3. Պահատուն կարող է յուրաքանչյուր աշխատանքային օրվա ընթացքում (երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 09:00-21:00) ցանկացած ժամի գաղտնիության պայմաններում պահատեղում տեղադրել և/կամ հանել արժեքներ/իրեր:
4. Հաճախորդի կողմից անհատական պահատեղի բանալու կորստի հետևանքով բանալու կրկնօրինակի պատրաստման կամ անհատական պահատեղի վերանորոգման համար Բանկի կրած ծախսերը հատուցում է հաճախորդը, ընդ որում բանալին կորցնելու դեպքում գանձվում է 15,000 ՀՀ դրամ:
5. Վարձակալության պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո անհատական պահատեղը հաճախորդի կողմից չազատելու դեպքում վարձակալության պայմանագիրը շարունակում է գործել՝ Բանկի կողմից յուրաքանչյուր անգամ անակցեպտ երկարաձգվելով սկզբնական պայմանագրի ժամկետով: Ընդ որում, երկարաձգման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաճախորդի հաշվից(ներից) գանձվում է վճար՝ երկարաձգման օրվա դրությամբ հրապարակված սակագնին համապատասխան: Նշված եղանակով երկարաձգումները կատարվում են այնքան մինչև հաճախորդի հաշվին(ներին) առկա գումարը բավարարում է սակագինը գանձելու համար, հակառակ դեպքում ոչ ավել քան 1(մեկ) տարի:
6. Բանկը սույն պայմանների 4-րդ և 5-րդ կետով նախատեսված ծախսերը անակցեպտ կերպով գանձում է Հաճախորդի հաշվում(ներում) առկա դրամական միջոցներից՝ անհրաժեշտության դեպքում կատարելով արժույթների փոխարկում Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
7. Հաճախորդն իրավունք ունի միակողմանի դադարեցնել Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով Բանկին և վճարելով Պահատուփի հետ կապված Բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ: Այս դեպքում Բանկը վճարված կամ հաշվարկված միջնորդավճարի վերահաշվարկ չի կատարում:
8. Մեկ պահատուփում պահվող արժեքների կամ իրերի առավելագույն քաշը չի կարող գերազանցել 25 (քսանհինգ) կիլոգրամը: